ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Չեխիայի Հանրապետություն (Պրահա) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Արուս Աթանեսյան.

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ժողովրդագրության և ընտանիքի սոցիալական երաշխիքների վարչության ինտեգրված սոցիալական ծառայությունների բաժնի փորձագետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Չեխիայի Հանրապետություն (Պրահա), 2025 թվականի ապրիլի 9-ից 11-ը.

4. Հրավիրող կողմը.

Հոգեկան առողջության պահպանման և վերականգնման կենտրոն

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Վերականգնմանն ուղղված առաջնորդություն» թեմայով դասընթացին:

6. Քննարկված թեմաները.

- Դասընթացի առաջին օրը նվիրված է եղել «ոգեշնչել, խրախուսել և աջակցել» կազմակերպությունների ղեկավարներին և առաջնորդներին՝ իրականացնել և զարգացնել վերականգնմանը միտված մոտեցումներ իրենց կազմակերպություններում կամ մատուցվող ծառայություններում:
- Դասընթացի երկրորդ օրը ներկայացվել և քննարկվել են Վերականգնում և վերականգնման սկզբունքներ CARe մոդել-ի փորձառական գիտելիքների դերը ծառայությունների բարելավման մեջ, ծառայությունների համատեղ ձևավորման, համայնքի հետ համագործակցության, արժեքահեն առաջնորդության և վերականգնմանն ուղղված մշակույթի ձևավորման առանձնահատկությունները:

Դասընթացի օրը կազմակերպվել է այցելություն վերականգնմանն ուղղված խնամքի ծառայությունների կենտրոն, որտեղ ծանոթացել ենք տրամադրվող ծառայությունների կառուցվածքին, կազմակերպման մեխանիզմներին և շահառուների սպասարկման գործընթացին: Կենտրոնում իրականացվում է համապարփակ վերականգնողական խնամք՝ ներառելով բժշկական, սոցիալական և հոգեբանական աջակցություն: Այցը հնարավորություն տվեց ուսումնասիրելու եվրոպական լավագույն փորձը՝ վերականգնողական ծառայությունների մատուցման ոլորտում, ինչը կարող է օգտակար

հիմք հանդիսանալ նմանատիպ ծրագրերի մշակման և իրականացման համար Հայաստանում:

- Աշխատաժողովի երրորդ օրը նվիրված է եղել մասնակից պետությունների միջև փորձի փոխանակմանը, տրամադրվել է ընդհանուր պատկերացում վերականգնմանն ուղղված խնամքի մասին, ներկայացվել է վերականգնմանն ուղղված արժեքահեն առաջնորդության հայեցակարգը, նաև քննարկվել է ինչպես աջակցել առաջնորդներին կազմակերպությունում ուսուցման, աճի մտածելակերպի և փորձառական գիտելիքի վրա հիմնված մշակույթ ձևավորելու ուղղությամբ:

Ընդհանուր առմամբ դասընթացի ընթացքում մասնակիցներին տրամադրվել են տեսական և գործնական գիտելիքներ վերականգնմանն ուղղված խնամքի վերաբերյալ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Վերոնշյալ թեմաների շրջանակներում բացի դասընթացից, հանդիպում և մասնագիտական քննարկումներ են կազմակերպվել նաև տեղի հասարակական կազմակերպություններից մեկի հետ՝ Bona հոգեկան առողջության վերականգնման և խնամքի կենտրոն:

Իմ կողմից անդրադարձել է եղել ՀՀ-ում խնամքի կազմակերպմանը և տեսակներին, պլանավորվող սոցիալական պատրոնաժի գաղափարին, ընդհանուր առմամբ ներկայացրել եմ Հայաստանյան փորձը և առկա մարտահրավերները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպումների ընթացքում ֆորմալ որոշումներ չեն կայացվել, կողմերը փոխանակվել են կոնտակտային տվյալներով՝ հետագայում, ըստ անհրաժեշտության, կապ հաստատելու նպատակով:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվել է շարունակել մասնագիտական համագործակցությունը՝ մենթորություն, խորհրդատվություն, ուսումնական այցեր և լրացուցիչ վերապատրաստումներ՝ ըստ կարիքների:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

Արուս Աթանեսյան **22/04/2025**